ՀՀ ԿԳՄՄՆ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Դպրոց՝ Ջերմուկի թիվ 3 միջն. դպրոց

ՈՒսուցիչ՝ Ավանեսյան Նինա Սերյոժայի

Ղեկավար՝ Կ.Օհանեսյան

ՎԱՅՔ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

1.Արժեհամակարգի էությունն ու նշանակությունը.....5

2. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման մեթոդները ու գործոնները .....……...7

3.Գրականության ուսուցումը սովորողի արժեհամակարգի ձևավերման գործում..10

3.1 Գործնական համատեքստ ……11

Եզրակացություն ……16

Գրականության ցանկ……17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արժեքային համակարգի ձևավորումը կրթության հիմնախնդիրներից է: Մեր նպատակն է ձևավորել ոչ միայն գիտելիքներով զինված մարդ, այլև սեփական ինքնությանը հաղորդ, պատկանելության և պատասխանատվության գիտակցություն ունեցող քաղաքացի: «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով:Առավել ընդունված է այն ընկալումը,որ արժեհամակարգը մարդու բարոյական,գեղագիտական,հոգևոր,իմացական,մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է,որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ,բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Այս հետազոտական աշխատանքը ուսումնասիրում է սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման հիմնական առանձնահատկությունների բացահայտումը, որոնք առավելապես դիտարկելու ենք գրականության դասավանդման ընթացքում: Կրթությունը համարվում է այնպիսի գործոն,որը արժևորում է մարդու դերը հասարակության մեջ: 21-րդ դարի քաղաքացին հասկանում է,որ այն երկիրն է հավակնում ունենալ լավ կրթական համակարգ,որը ոչ միայն գիտելիք է փոխանցում,կարողության-հմտության ձևավորումն է ապահովում,այլև պատասխան է տալիս սովորողի արժեքային վերջնարդյունքների մասին հիմնահարցերին:

Դրանք են՝ լինի հայրենասեր, օրինապահ,ազնիվ մարդասեր, պատախանատվությամբ օժտված և այլն:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթական բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները,որոնց թվում,այնուամենայնիվ,արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների,մասնավորապես՝ լեզվի և գրականության անգնահատելի դերը: Ուսումնասիրության նպատակը և խնդիրները:Եթե հետազոտության նպատակն է ուսումնասիրել արժեհամակարգի ձևավորումը գրականության դասավանդման ընթացքում,ապա հետազոտության խնդիրն է,թե ինչպիսի ազդեցություն կունենան գրական երկերը արժեհամակարգի ձևավորման ու զարգացման գործում: Վերոնշյալ

նպատակի իրագործման համար դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ Բացահայտել արժեքային համակարգի ձևավորման հիմնական նախադրյալներն ու պայմանները,
- ✓ Ուսումնասիրել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման մեթոդներն ու դրանց կիրառման առանձնահատկությունները,
- ✓ Վերլուծել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման մեթոդների կիրառման առանձնահատկությունները կոնկրետ դասընթացի շրջանակներում:

1.ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արժեքը տվյալ անհատի համար կենսականորեն նշանակալի երևույթ է: «Արժեք» բառն առաջ է եկել ֆրանսերեն «valoir» բառից, որը նշանակում է արժանի լինել[1]: Արժեքն ինչ-որ բանի կարևորությունը, նշանակությունը և օգտակարությունն է: Արժեքային համակարգը կատարում է ամենօրյա կողմնորոշման դեր մարդու առարկայական և սոցիալական գործունեության մեջ:Անձի արժեքային համակարգը կախված է տարիքային զարգացման առանձնահատկություններից: Հայաստանում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ միջնակարգ կրթության պետական չափորոշչում[2]: Ըստ որի անհրաժեշտ է ձևավորել այնպիսի աշակերտ,ով պետք է՝

ա.գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության,արվեստի,ավանդույթների, ազգային այլ արժքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը,

բ.կարևորի բարոյական չափանիշները և համամարդկային արժեքները,լինի ազնիվ,գթասիրտ,արդարամիտ,օրինապահ,բարեկիրթ և դրսևորի քաղաքակիրթ վերաբերմունք,

գ.կարևորի գեղագիտական արժեքները,գնահատի գեղեցիկը,բարին և ճշմարիտը,

դ. հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները,լինի հայրենասեր,կարևորի ազգայի հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,

ե.գիտակցի,որ գիտությունը արդիական տեխնոլոգիաները,կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում,

զ.գիտակցի,որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը,

է.հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր և հանդուրժող ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ:

1Лавриненко В.Философия,Учебник,М.,2004,էջ401:

[2]Միջնակարգ Կրթության Պետական Չափորոշիչ https://www.arlis.am/documentview.aspx?docid=42195

Ընդհանուր առմամբ պետք է նշել,որբ մարդու կյանքի արժեքների համակարգը կարող է բաղկացած լինել մի քանի տարրերից՝

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ	ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ	ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով:Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրահամար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի[3]: Ամփոփելով վերոնշյալ տեսակետներն ու մոտեցումները՝ կարող ենք նշել, որ արժեհամակարգի ձևավորումը հանդիսանում է դպրոցի կարևոր առաքելություններից մեկը, ուստի այն պետք է դառնա ուսուցման գործընթացի անբաժանելի տարր և իրականացվի ուսուցման յուրաքանչյուր մեթոդին զուգահեռ:

[3]Ի.Փարեմուզյան, Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում, էջ 398:

2.ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Առհասարակ յուրաքանչյուր գործընթաց ճիշտ և արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է կիրառել հստակ մեթոդաբանություն: Մեթոդներն այն հնարները, եղանակներն ու միջոցներն են, որոնց շնորհիվ հնարավոր է հասնել այն արդյունքին, որին ձգտում ենք: Ուսուցման գործընթացի կազմակերպման հարցում ևս կիրառվում են մի շարք մեթոդներ, ժամանակ առ ժամանակ դրանք ենթարկվում են մի շարք փոփոխությունների, հարմարվում են նոր մարտահրավերների, որպեսզի առավելագույնս կատարեն իրենց գործառույթը:

Ինչպես ուսուցման գործընթացի կազմակերպման, այնպես էլ սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորման հարցում կարևոր է ունենալ հստակ մեթոդների առկայություն: Ըստ այդմ, աշխատանքի այս հատվածում ցանկանում եմ դիտարկել սովորողների արժեհամակարգի ձևավորման մեթոդները, ինչպես նաև դրանց կիրառման առանձնահատկությունները:

Օրինակ ծառայել,

Նկարագրել-հիմնավորել,

Պատկերացնել,

Համեմատել,

Գնահատել:

Եթե ուսուցիչը ցանկանում է, որ աշակերտները դրսևորեն ազնիվ վարքագիծ, առաջին հերթին ինքը պետք է աշակերտների աչքերում հանդես գա ազնիվ վարքագծով:

Նկարագրել-հիմնավորելը այնքանով է հետաքրքիր, որ սովորողների մեջ զարգացնում է արժեքային համակարգ ձևավորելու հնարավորությունը, սակայն այստեղ միայն խոսքը չի կարող աշխատել, կարևոր է հիմնավորել ամեն գաղափար և տեսակետ պրակտիկ օրինակներով, որպեսզի աշակերտի համար համոզիչ լինի:

Պատկերացնելը ևս շատ հետաքրքիր է, այն կայանում է տարբեր արժեքների կրողների վարքագիծը պատկերացնելով, որի արդյունքում սովորողները հստակ

պատկերացնում են, որ օրինակ հայրենասեր և օրինապաշտ քաղաքացու վարքագիծը դրական կարծիք է ձևավորում այդ անձի մասին, ինչի շնորհիվ աշակերտների մոտ ևս ձևավորվում է հայրենասեր և օրինապաշտ լինելու արժեհամակարգ:

Համեմատելու մեթոդը ևս շատ կարևոր է, որի շնորհիվ հնարավոր է դառնում դիտարկել երկու տարբեր արժեքներ կրող անձանց և գնահատել վերջիններիս որակները:

Համեմատելը հնարավորություն է տալիս նաև գնահատել. մասնավորապես՝ տարբեր արժեհամակարգ ունեցող մարդկանց համեմատելու արդյունքում սովորողները սկսում են գնահատել, թե որ արժեքներ կրող մարդիկ են առավել նախընտրելի, ինչի արդյունքում էլ սկսում են գնահատել իրավիճակներն ու դրանց շրջանակներում համապատասխան վարքագիծ ընտրելու հնարավորությունները:

Որպես սովորողի արժեքային համակարգի ձևավորման վրա ազդող գործոններ, կարող ենք առանձնացնել մի քանիսը:

Առաջին գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների:Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության: զգացում ապրելու ունակության ձևավորումն է»[4]:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն):

[4] Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., էջ 64:

Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

3.ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական դաստիարակչական կամ արժեքային ընդանուր զարգացման խնդիրները։Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե առանձին մոտեցում,այլ գիտելիքների ու կարողությունների, կամքի, բնավորության, զգացմունքների,հոգեբանական տարբեր դրսևորումների փոխկապակցված մոտեցում։

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները,որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում։ Ուսուցիչը ուսուցման կազմակերպման ձևերի ընտրության միջոցով ավելի արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը։Որակյալ դասի անցկացնելը կապված է մի շարք գործոններից՝

1.Սոցիալական (դասերին ներկայացվող պահանջների գիտակցումից և կատարումից)

2.Նպատակներից

3.Դեպի ազգային արժեքներ ուսուցման կողմնորոշումից

4.Դասերի ժամանակ համաշխարհային և ազգային գրականության պահպանումից։

Գրականության հիմնական նպատակներից մեկը անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որի իրականացման համար պետք է գրական հերոսների օրինակով նրանց մեջ սերմանել բարոյական արժեքներ։

3.1 ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Գրականությունը մարդկության պատմության հոգևոր հայելին է, որ ապահովում է կյանք մտնող սերնդի մարդկային ձևավորման և կայացման դժվարին գործընթացը։ Ժամանակակից գրականության ուսումնական բնագավառը բովանդակում է վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգայի արժանապատվություն։ Հայ գրականության դասընթացի հիմնական նպատակներից մեկը անհատի հոգևոր ու մտավոր զարգացմանը,անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որի իրականացման համար անհրաժեշտ է սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին գրական հերոսների օրինակով և գրական երկերի գաղափարագեղարվստական հարստության օգտագործմանը։ Նրանց մեջ սերմանել բարոյական արժեքներ՝ մարդասիրություն, ազնվություն,արդարամտություն, պատվախնդրություն, հայրենասիրություն, պատասխանատվություն, բարեխղճություն և լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյականային այլ հատկանիշներ։

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական,խմբային,էքսկուրսիա և այլն) առավել արդյունավետ է դարձնում սովորողների արժեհամակարգային դաստիարակչական խնդրիների լուծումը։

Յուրաքանչյուր ուսուցչի առջև կանգնում է իր առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեհամակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության բարդ խնդիրը։Չեմ կարող չնշել,որ յուրաքանչյուր ուսուցիչ ձգտում է արդյունավետ դաս անցկացնել, սակայն դա այդքան էլ հեշտ չէ։Որպեսզի յուրաքանչյուր ուսումնական առարկա յուրաքանչյուր սովորողի համար անձնային նշանակություն ստանա, անհրաժեշտ է, որ դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական, համագործակցության մթնոլորտ,խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց,նախաձեռնություն։ Իսկ ցանկացած հաջողված դասի գրավականը սովորողի համար որոշակի նպատակների բացահայտումն է։ Դասը պլանավորելիս

պետք է առաջնորդվել հետևյալ հարցադրումով՝ « Ի՞նչ եմ ուզում,որ աշակերտներն այս դասից սովորեն»։ Այս հարցի միջոցով կարելի է առանձնացնել այն հմտությունները, ընկալումները,արժեքները,որոնք ուսուցիչն ակնկալում է սերմանել տվյալ՝դասի միջոցով։

Ինչպես ժամանակակից կյանքը,այնպես էլ հեռավոր անցյալը պատկերող ստեղծագործություններում իրականությունը վեր է հանվում և արտացոլվում հիմնականում կերպարի միջոցով։Իսկ գրական կերպարը հեղինակի մտքերի,հույզերի,տրամադրությունների արտահայտիչն է։Կերպար մրջոցով հեղինակը դրսևորում է իր համակրանքն ու հակակրանքը,ատելությունը , դրվատում կամ մերկացնում է գոյություն ունեցող օրենքները,բարքերը, ծառանում օտար բռնականլենրին և ներքին թշնամիներին։Կերպարը բնութագրելիս ուսուցիչը պետք է օգտագործի այն դրվագները,որոնք պարունակում են դաստիարակչական իմաստ։ Սովորողների համար պետք է նկատելի դառնան հերոսի նպատակադրումը, ազնվությունը, հայրենասիրությունը,վճռականությունը, բողոքը հոռի բարքերի դեմ։ Օրինակ ուսումնասիրելով Դ.Դեմիրճյանի «Վարդանանք»-ը, Խ.Աբովյանի «Վերք Հայաստանի»-ին, Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպերը, ինչպես նաև «Սասունցի Դավիթ» էպոսը, սովորողների մոտ սերմանում ենք ազգային հպարտության,հայրենասիրության զգացում։ Դ.Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի գլխավոր հերոս Վ.Մամիկոնյանի կերպարը որպես հայրենասերի՝ օգնում է սովորողների մեջ զարգացնել ազգային-պետական աժեքային համակարգ, հայրենասիրություն։Հաջորդ կերպարը Վասակ Սյունեցին է,որն ունենում է հոգեկան տառապանքի պահեր,սակայն դրանք բխում են նրա փառասիրության էությունից։ Այս վեպում Դեմիրճյանը հակադրում է «Վարդանանք»-ի գլխավոր հերոսներին՝ ազգային հերոսին և ազգի դավաճանին։

Վեպի ուսուցանելը կնպաստի աշակերտների մոտ հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական գիտելիքների ձևավորմանը։ Տսովորողների մոտ արժեհամակարգի արդյունավետ ձևավորման նպատակով, «Վարդանանք» պատմավեպի ուսուցումը կազմակերպում եմ՝ կիրառելով հետևյալ մեթոդները՝«մտագրոհ»,«բանավեճ»,«վենի դիագրամ»ու «ԳՈՒՍ»։Աշակերտներին հանձնարարում եմ «վենի դիագրամ» մեթոդով համեմատել Վ.Մամիկոնյանին և

Վասակ Սունեցուն։

Գրատախտակին գրում եմ Վարդան Մամիկոնյան և աշակերտներին ասում եմ կիրառել «մտագրոհ» մեթոդը։Հաջորդ քայլին դասարանը բաժանում եմ երկու խմբի՝ Վարդանի կողմնակիցներ և Վասակի կողմնակիցներ։ Առաջին խումբը փորձում է արդարացնել Վասակ Սյունեցուն,իսկ երկրորդ խումբը՝ հակառակը։«ԳՈՒՍ» մեթոդի կիրառմամբ սովորողները գրում են՝ ինչ գիտեն այս թեմայի մասին։Որից հետո լրացնում են գիտեմ սյունյակը։Հաջորդ հացս այն է,թե ինչ են ուզում իմանալ այս թեմայի մասին։Դասի ավարտին սովորողները լրացնում են «սովորեցի» սյունյակը։ Այսպիսով վեպը ուսուցանելիս լուծվում են մի քանի խնդիրներ՝

1.սովորողները պատկերացում են կազմում ազգային-ազատագրական պայքարի դրվագների,ինչպես նաև, հայրենանվեր հերոսների սխրանքների մասին։

2.Դաստիարակել հայրենասիրություն,ձևավորել հայրենիքի նկատմամբ ազգային արժանապատվություն և հպարտություն։

3.Զարգացնել սովորողների ճանաչողական, ստեղծագործական մտածողությունը, ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները[5]։

Արժեքային համակարգի ձևավորման լավագույն օրինակ է հայ ժողովրդական բանահյուսության մեծարժեք գանձերից «Սասունցի Դավիթ» էպոսը, որն իր մեջ պարունակում է հայ ժողովրդի ազգային երազանքները, բնավորությունը, իղձերն ու ձգտումները։

Վերլուծելով «Սասունցի Դավիթ» էպոսի հերոսների արարքներն ու հաարակական վարքը, ցույց տալով նրանց գլխավոր հատկանիշները՝ հայրենասիություն, ազատատենչություն,մարդասիություն,մարդկային մի շարք բարոյական արժեքներ, փորձել եմ ընդգծել էպոսի ոչ միայն ազգային, այլև համամարդկային էությունը։

Մեկ այլ օրինակ է Ալ. Շիրվանզադեի « Պատվի համար» դրաման։ Նյութի ուսուցումը սկսում եմ վերնագրից,քանի որ յուրաքանչյուր հերոս ունի պատվի իր ըմբռնումը։Այս դրամայում պատվի հիմքը նյութական արժեքն է,շահը։Նյութն անցնելուց հետո դասարանում կազմակերպում եմ ասուլիս կամհանձնարարում եմ գրել

5.Ա.Ղուկասյան,Հայոց պատմություն 8-9-րդ դասարան Ուսուցչի ձեռնարկ։Երևան 2013։էջ 32։

շարադրություն,թե ինչպես է ժամանակակից սերունդը պատկերացնում «պատիվ» հասկացությունը,որն է ազգային, մարդկային և անհատական արժանապատվությունը։

Որպես արժեքային համակարգի ձևավորման լավագույն օրինակ առանձնացրել եմ Գ. Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունը,որի ուսուցման նպատակն է սովորողների մոտ հիմնավորել կարծիք ու վերաբերմունք արդարության, ազնվության,ինքնասիության,ազահության վերաբերյալ։Խթանման փուլում մինչ դասանյութին անցնելը, աշակերտներին առաջարկում եմ իրենց կյանքից վերհիշել մի դեպք,երբ դժվարացել են ապացուցել իրենց ճշմարտացիությունը.ի՞նչ ապրումներ են ունեցել,կարողացել են արդյոք դուրս գալ այդ իրավիճակից,ինչպե՞ս։ Իսկ այսօր ինչպե՞ս կվարվեին։

Իսկ իմաստի ընկալման փուլում դասրանը բաժանում եմ երկուխմբի։Քննարկման առաջին փուլում մի խումբը հանդես է գալիս Պեպոյի կեղմից,մյուսը՝ Զիմզիմովի։Այնուհետև ամփոփ ներկայացնում եմ երկու հերոսների միջև եղած հակամարտության էությունը և առաջարկում երկու կեղմերին, օգտվելով բնագրից,փաստարկներ հավաքել հոգուտ իրենց ընտրած հերոսի՝ արդարացնելով նրա վարքագիծը։

Քննարկման երկրորդ փուլում առաջարկում եմ սովորողներին փոխել իրենց դերերը։ Այս դեպքում քննարկումը պետք է ծավալվի ժամանակակից կյանքի համատեքստում։Այսինքն հերոսների միջև եղած հակամարտությունը տեղափոխվում է այսօրվա իրականություն,և ունենում ենք ժամանակակից պեպոների և զիմզիմովների բախում։Այս փուլում սովորողները փաստարկները պետք է փնտրեն իրական կյանքում կամ իրենց շրջապատում։Իսկ կշռադատման փուլում աշակերտներին հանձնարարում եմ լրացնել հարցաշար.

1.Այս դասը ինչ տվեց ձեզ

2 Որ խավի ներկայացուցիչ է Պեպոն

3.Որ խավի ներկայացուցիչ է Զիմզիմովը

4.Դուք ինչպես կվարվեիք ,եթե լինեիք Պեպոյի կամ Զիմզիմովի փոխարեն

5.Ճանաչում եք ձեր շրջապատում պեպոներ և զիմզիմովներ։ Պատասխաններից հասկանալի է դառնում, որ աշակերտների մոտ ձևավորվեց հետևյալարժեքները՝ազնվություն,ինքնասիրություն,արդարամտություն։Դասապրոցեսի ճիշտ կազմակերպման արդյունքում ես կարողացա դրական արժեքներ սերմանել սովորողների մոտ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արժեքային համակարգի ձևավորումը կարևորվում է այն պատճառով, որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են,քանի որ դրանք սկիզբ են առնում համամարդկային սկզբունքներից, օրենքներից։ Ցանկացած լավ, բարի, արժեքավոր բան կրթության միջոցով է փոխանցվում մարդկանց,դաստիարակում մատաղ սերունդ։Հետևաբար կարելի է եզրակացնել, որ արդի սերնդի արժեհամակարգի ձևավորումն անելիքներ ունի դպրոցը,որի նպատակն է կերտել ազգային նկարագիր ունեցող արժեքներով օժտված սերունդ։

Ամփոփելով աշխատանքի շրջանակներում ներկայացված մոտեցումներն ու տեսակետները, կարող եմ առանձնացնել հետևյալ եզրահանգումները.

- Սովորողների արժեհամակարգի ձևավորումը բարդ և բազմակողմանի գործընթաց է, որը պետք է իրականացվի ուսուցման յուրաքանչյուր մեթոդի կիրառմանը զուգահեռ և հանդիսանա ուսուցման պարտադիր բաղադրատարրերից մեկը։
- Արժեքային համակարգի ձևավորման համար հանրակրթական բնագավառում կարևոր նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես գրականությունը։
- ՈՒսուցման բարենպաստ պայմանների ստեղծման և դաստիրակության գործընթացի ճիշտ կազմակերպան միջոցով նպաստում ենք սովորողների համամարդկային արժեքների յուրացմանը, նրանց մեջ ձևավորում հումանիստական վերաբերմունք աշխարհի հանդեպ։

Այսպիսով, եկանք այն եզրակացության,որ 21-րդ դարի սերնդի արժեհամակարգի ձևավորման անելիքներ ունի դպրոցը,որի նպատակն է կերտել ազգային նկարագիր ունեցող արժեքներով օժտված սերունդ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Փարեմուզյան Ի., Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում, Երևան, 2018:
2. Դոլուխանյան Ա.,Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան 2006:
3. Ա.Ղուկասյան,Հայոց պատմություն 8-9-րդ դասարան Ուսուցչի ձեռնարկ։Երևան 2013:
4. Դ.Դեմիրճյան,Երկերի Ժողովածու,Երևան,1983թ:
5. Մկրյան Մ.,Հայ հին գրականության պատմություն, Երևան, 1976:
6. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ.:
7. Մուդրիիկ Ա.Վ.-Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում - Երևան 1986:
8. Лавриненко В. Философия, Учебник, М., 2004:
9. https://www.arlis.am/documentview.aspx?docid=42195
10. Առարկայական չափորոշիչներ.https://escs.am/am/search